

Կատաղություն

Կատաղությունը սուր ընթացող վիրուսային վարակիչ հիվանդություն է, որը բնորոշվում է նյարդային համակարգի ծանր ախտահարումով և ջղաձգությամբ, լուծանքով, ինչպես նաև կլման և շնչառական մկանների կծկանքով: Հարուցիչը ՌՆԹ պարունակող փամփուշտանման վիրուս է՝ լիսավիրուսների սեռից, ռաբդովիրիդե ընտանիքից, որը կուտակվում է հիվանդ կենդանիների ուղեղում թքագեղձերում, արցունքագեղձերում և ենթաստամոքսային գեղձում: Հիվանդությունը տարածված է ամենուրեք բացի Ավստրալիայից և զգայուն են բոլոր կաթնասունները ու թռչունները:

Պատճառներ

Վարակի հիմնական աղբյուրը հիվանդ կենդանիներն են՝ շները, կատուները, ուղտերը, ձիերը, իսկ վայրի կենդանիներից՝ գայլը, աղվեսը, շնագայլը, որոնք բնության մեջ կատաղության վիրուսի հիմնական կրողներն են: Վարակը տեղի է ունենում երբ հիվանդ կենդանիների թուքը ընկնում է վնասված մաշկի կամ չվնասված լորձաթաղանթի վրա:

Մարդը վարակվում է կատաղությամբ հիվանդ կենդանու կծելուց, ինչպես նաև թուքը վնասված մաշկի, հազվադեպ՝ շրթունքների, քթի, աչքերի լորձաթաղանթների վրա ընկնելիս, այնուհետև վիրուսը նյարդացողուններով թափանցում է գլխուղեղ և ողնուղեղ՝ առաջացնելով բորբոքումներ:

Պաթոգենեզ

Կենդանիների հիվանդության գաղտնի շրջանը 14-16 օր է, որից հետո հիվանդ կենդանին դառնում է անհանգիստ, գրգռված, նկատվում է առատ թքարտադրություն, հրաժարվում է խմելուց և ուտելուց, առաջնում են ջղաձգումներ, լուծանք և կենդանին սատկում է: Կենդանու թուքը 8-10 օր (մինչև հիվանդության արտահայտված ախտանշանների ի հայտ գալը) վարակիչ է:

Տարբերում են հիվանդության գրգռված, պարալիտիկ, ատիպիկ ու լատենտ ձևեր: Գրգռված ձևը առավել տարածվածն է և ընթանում է 3 փուլով՝ պրոդրոմալ, մանիակալ և պարալիտիկ:

Բուժում

Բուժումն անարդյունավետ է, հիվանդը մահանում է:

Կանխարգելում

Մարդու կատաղության կանխման միակ միջոցը հակակատաղության վակցինայի պատվաստումն է: Ուստի կենդանիների կծելուց հետո պետք է ամնիջապես դիմել բժշկի՝ վերքերը մշակելու և անհրաժեշտության դեպքում պատվաստումներ կատարելու համար: Հարկավոր է խստորեն պահպանել որոշակի ռեժիմ. բացառել սպիրտային խմիչքների օգտագործումը, խուսափել ֆիզիկական բեռնվածությունից, գերսառեցումից և գերտաքացումից: Կանխարգելման նպատակով կատարվում է ընտանի կենդանիների պարտադիր գրանցում և պատվաստում: